Պարոն Ս. Աղինյանին

Խնդրում եմ նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավարական խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Մ. Մեսրոպյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ ի գիտություն

Մ. Մեսրոպյան _____

« 13 » մայիս 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի մայիսի 5-7-ը քաղաք Մասկատ (Օմանի Սուլթանություն)՝ էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի 22-րդ տարեկան համաժողովին, գլխավոր ժողովին և էլեկտրաէներգետիկական շուկայի և տնտեսական կարգավորման աշխատանքային խմբերի համատեղ նիստի մասնակցության

1. **Մասնակիցների անուն, ազգանուն՝**
   - Սերգեյ Աղինյան,
   - Գարիկ Չիլինգարյան:

2.Զբաղեցրած պաշտոնը՝

- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ,
- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի խորհրդական:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ 2025 թվականի մայիսի 5-7-ը Օմանի Սուլթանության Մուսկատ քաղաք:

4.Հրավիրող կողմը՝ Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիան (ԷԿՏԱ, անգլ.՝ ERRA) և Օմանի հանրային ծառայությունների կարգավորման մարմինը (APSR):

5.Գործուղման նպատակը՝ Մասնակցություն ԷԿՏԱ-ի 22-րդ տարեկան համաժողովին, գլխավոր ժողովին և էլեկտրաէներգետիկական շուկաների և տնտեսական

կարգավորման և գազային վառելիքների և տնտեսական կարգավորման աշխատանքային խմբերի համատեղ նիստին: Համաժողովը միավորել էր 54 երկրներից 345 մասնակիցների:

6.Քննարկված թեմաները՝ Համաժողովի խորագիրն էր՝ «Էներգետիկ փոխակերպման խթանումը արդյունավետ քաղաքականության և կարգավորման միջոցով»:

Քանի որ համաժողովն առաջին անգամ էր անցկացվում Մերձավոր Արևելքում, այն նաև քննարկեց տարածաշրջանի էներգետիկ կայունության հարցերը՝ թույլ տալով մասնակիցներին համեմատել իրենց տարածաշրջաններում էներգետիկ փոխակերպման առկա նախապայմանները և ուսումնասիրել ռազմավարական փոխկապակցվածության փորձը:

Վերականգնվող էներգիայի միջազգային գործակալության (IRENA) ներկայացուցչի կողմից ներկայացվեցին վերականգնվող էներգիայի գլոբալ ներդրումների ցուցանիշները: Մասնավորապես, նշվեց, որ վերականգնվող էներգիայի հզորությունների ներդրումները 2023 թվականին կազմել են 570 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը 2022 թվականի 448 մլրդ ԱՄՆ դոլարի ցուցանիշի համեմատ աճել է 27%-ով: Սակայն նշվեց, որ դա բավարար չէ և վերականգնվող էներգիայի, ցանցային և ճկունության, էներգետիկ արդյունավետության ներդրումները, որոնք 2023 թվականին կազմել են 1,29 տրիլիոն ԱՄՆ դոլար, պետք է աճեն 2024-2030 թվականներին՝ կազմելով 4,5 տրիլիոն դոլարը, որը սահմանված է Կողմերի 28-րդ համաժողովի ԱՄԷ կոնսենսուսով: Միևնույն ժամանակ, ցանցերում իրականացված ներդրումները կազմել են շուրը 300 մլրդ ԱՄՆ դոլար տարեկան, ինչը պայմանավորված է ԱՄՆ-ում և Սիցիլիայում համապատասխանաբար 2,600ԳՎ և 80ԳՎ կուտակիչներով:

Ցանցային ինտեգրմանը և կառավարմանը նվիրված նստաշրջանը անդրադարձավ վերականգնվող էներգիայի աղբյուրները գործող ցանցերում ինտեգրելու մարտահրավերներին: Ելույթներով հանդես եկող փորձագետներն ընդգծեցին կարգավորող ռազմավարությունները և տեխնոլոգիական լուծումները՝ վերականգնվող էներգիայի ներթափանցման աճի պայմաններում ցանցի կայունությունն ապահովելու համար: Այս քննարկումները օգտակար պատկերացում տվեցին Հայաստանի ներկայիս ջանքերի համար՝ արդիականացնելու իր ցանցային ենթակառուցվածքները՝ վերականգնվող էներգիայի աղբյուրները ինտեգրելու համար:

Ներկայացվեցին տարածշրջանային շուկաները և կարգավորողների անդրսահմանային համագործակցությունը Բալկաններում, Սկանդինավյան երկրներում,

Մերձավոր Արևելքում և Արևմտյան Աֆրիիկայում: Ներկայացվեց կարգավորող մարմինների դերը ավելի արդյունավետ և անվտանգ էներգամատակարարման և էներգետիկ համակարգի անկախության ապահովման գործում: Մասնավորապես նշվեց, որ չնայած այն հանգամանքին, որ Բալկանները բավականին բարդ տարածաշրջան է, ներկայումս կարգավորողների համագործակցությունը և ենթակառուցվածքների ինտեգրումը հասել է բարձր մակարդակի: Տարածաշրջանային երկրներն ունեն էներգիայի արտադրության տարբեր աղբյուրներ՝ ածուխ, հիդրո, ինչպես նաև աճող վերականգնվող էներգիա, սակայն շատ երկրներ էլեկտրաէներգիան ներկրում են հարևան երկրներից դրա մատակարարման պակասի ժամանակ: Նշվեց որ զարգացած անդրսահմանային ենթակառուցվածքը տարածաշրջանային շուկաների արդյունավետ և կայուն զարգացման առանցքային կետերից մեկն է: Ընդհանուր առմամբ, ընդգծվեց տարածաշրջանային էներգետիկ համագործակցության կարևորությունը: Այս ուսումնասիրությունները հետաքրքիր էին Հայաստանի համար, քանզի մեր երկիրը նույնպես ձգտում է ընդլայնել էներգետիկ առևտուրը և համագործակցությունը հարևան երկրների հետ:

Ներկայացվեց անցումային վառելանյութերի՝ ջրածնի և այլ ցածր ածխածնային ռեսուրսների դերը ոլորտի վերափոխման գործում: Նշվեցին ինչպես դրա հետ կապված համակարգային, այնպես էլ տարածաշրջանային խնդիրները՝ ընդգծելով, թե ինչպիսի կարևոր դեր են խաղում ենթակառուցվածքների զարգացումը և միջոլորտային համակարգումը կայուն, ցածր ածխածնային ապագայի հասնելու համար:

Շուկայի բարեփոխումներ՝ էներգետիկ անցումը խթանելու համար թեմայով նստաշրջանի խոսնակներ Սթիվեն Վուդհաուսը (ՄԲ) և Գվիդո Բորտոնին (Իտալիա) քննարկեցին էներգետիկ անցումը աջակցելու համար անհրաժեշտ շուկայական բարեփոխումները, ներառյալ վերականգնվող էներգիայի աղբյուրների և էլեկտրաէներգիայի կուտակման համակարգերի ինտեգրման մեխանիզմները: Ընդգծվեց վերականգնվող էներգիայի ոլորտում արդեն իսկ պարադոքս դարձած երևույթը: Մինչ արևային էլեկտրակայանները արագորեն ընդլայնվում են, ֆինանսական եկամտաբերությունը կամ էներգիայի կլանման մակարդակը նվազում է, հատկապես էներգիայի գագաթնակետային արտադրության ժամանակահատվածներում: Ընդգծվեց աջակցության այնպիսի սխեմաների մշակման կարևորությունը, որոնք ոչ միայն կխթանեն արևային կայանների տեղակայումը, այլև կապահովեն երկարաժամկետ ինտեգրումը

շուկայում: Նշվեց նար, որ մրցակցային մեխանիզմները, ինչպիսիք են տարբերության պայմանագրերը (CfDs), նույնպես շարունակում են կարևոր դեր խաղալ: Այս քննարկումները օգտակար էին Հայաստանի առջև ներկայումս ծառացած խնդիրների տեսանկյունից՝ իր էներգետիկ շուկան բարեփոխելու և վերականգնվող էներգիայի ինտեգրումն ավելի սահուն դարձնելու համար:

Համաժողովի նյութերը հասանելի են հետևյալ հղումով՝ https://erranet.org/erra-annual-conference-2025-presentations/:

Այնուհետև, մայիսի 6-ին կայացավ ԷԿՏԱ-ի գլխավոր ժողովը, որի ընթացքում քննարկվեցին կազմակերպության, դրա անդամներին և նախագահության նոր անդամների ընտրություններին վերաբերող մի շարք հարցեր: Ներկայացվեց ԷԿՏԱ-ի ֆինանսական հաշվետվությունը, 2026 թվականի անդամակցության վճարների և 2025-2026 թվականների բյուջեն, 2025/2026 թվականների աշխատանքային պլանը, ԷԿՏԱ-ի մշտական հանձնաժողովների տեխնիկական զեկույցները (էլեկտրաէներգետիկական շուկայի և տնտեսական կարգավորման, էներգետիկ փոխակերպման, գազային վառելիքների և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովները):

Մայիսի 7-ին կայացավ ԷԿՏԱ էլեկտրաէներգետիկական շուկաների և տնտեսական կարգավորման և գազային վառելիքների և տնտսական կարգավորման աշխատանքային խմբերի համատեղ նիստը, որի ընթացքում քննարկվեցին աշխատանքային խմբերի հաշվետվությունները: Մասնավորապես, էլեկտրաէներգետիկական շուկաների և տնտեսական կարգավորման աշխատանքային խմբի կողմից մշակված Ցանցային ներդրումների ծրագրերի կարգավորող գնահատում և ցանցային ներդրումների կարգավորող խթաններ, ինչպես նաև գազի սակագների սահմանման լավագույն մեթոդները, հասույթի հաշվարկը, Totex մոտեցումը և խթանող գնային քաղաքականությունը: Նիստի ընթացքում ներկայացվեցին Մակեդոնիայի հաղորդման և բաշխման տարանջատման կարգավորման և Օմանի բաշխման ցանցի օպերատորների համար միասնական սակագին սահմանելու մոտեցումների փորձը: Նիստը ամփոփվեց աշխատանքային խմբի հետագա գործունեության և աշխատանքային ծրագրերի քննարկմամբ:

7.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Համաժողովը նպաստեց հայկական պատվիրակության և տարբեր երկրների գործընկերների միջև փոխգործակցության ամրապնդմանը: Տեղի ունեցան մի շարք երկկողմ քննարկումներ, այդ թվում Սլովակիայի կարգավորող մարմնի ղեկավարի գլխավորած պատվիրակության հետ, որը հյուրընկալելու է հաջորդ՝ 23-րդ տարեկան համաժողովը: Քննարկվեցին ԵՄ Թվինինգ ծրագրերի միջոցով հնարավոր համագործակցությունը՝ օգտագործելով Սլովակիայի փորձը մի շարք երկրներում, այդ թվում՝ Ղազախստանում, Ուզբեկստանում և Վրաստանում: Համաժողովի շրջանակներում հայկական պատվիրակությունը մի շարք օգտակար կապեր հաստատեց ինչպես ԷԿՏԱ-ի ղեկավարության, այնպես էլ այլ երկրների, այդ թվում՝ Ֆրանսիայի, Գերմանիայի, Լիտվայի, Մոլդովայի, Վրաստանի, Ղազախստանի և այլ երկրների ներկայացուցիչների հետ:

Ինչպես նշվեց վերևում, համաժողովի ավարտից հետո հայկական պատվիրակությունը մասնակցեց նաև ԷԿՏԱ-ի ղեկավար մարմնի՝ գլխավոր ժողովի նիստին, որի ընթացքում տեղի ունեցան կազմակերպության նախագահության նոր անդամների ընտրությունները: Երկու թափուր տեղի համար պայքարում էին երեք թեկնածուներ: Հայաստանը առաջադրեց ՀԾԿՀ անդամ պարոն Սերգեյ Ագինյանի թեկնածությունը, ով հաջողությամբ ընտրվեց Լատվիայի կարգավորող մարմնի նախագահի հետ միասին: Հայաստանի ներկայացուցչի ընտրությունն ընդգծում և ամրապնդում է Հայաստանի դերը տարածաշրջանային էներգետիկ կարգավորման ոլորտում:

ԷԿՏԱ-ի 22-րդ տարեկան համաժողովը հայկական պատվիրակությանը արժեքավոր հնարավորություն ընձեռեց էներգետիկ կարգավորման ոլորտում համաշխարհային լավագույն փորձին ծանոթանալու համար, մասնավորապես՝ վերականգնվող էներգիայի և էլեկտրաէներգիայի կուտակման համակարգերի ինտեգրման, ցանցի կառավարման և տարածաշրջանային համագործակցության վերաբերյալ: Միջոցառումը նաև հարթակ ստեղծեց երկկողմ հարաբերությունները ամրապնդելու և համագործակցության հնարավորությունները ուսումնասիրելու համար՝ համապատասխանեցնելով Հայաստանի էներգետիկայի ոլորտում ռազմավարական նպատակներին:

Համաժողովի ընթացքում հայտարարվեց, որ հաջորդ՝ 23-րդ տարեկան համաժողովը կկանցկացվի Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայում:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Ընդգծելով միջազգային հարթակներում ներկայացվածության և համապատասխան աշխատանքի կարևորությունը՝ նպատակահարմար ենք համարում շարունակել համագործակցությունը ինչպես Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ԷԿՏԱ), այնպես էլ կազմակերպության անդամ հանդիսացող ազգային կարգավորող մարմինների հետ՝ միջազգային լավագույն փորձը ուսումնասիրելու համար: Միաժամանակ, հաշվի առնելով, որ հանձնաժողովի անդամ Սերգեյ Ագինյանը ընտրվել է ԷԿՏԱ-ի ղեկավար մարմնի՝ նախագահության անդամ, նպատակահարմար է ակտիվորեն մասնակցել նախագահության նիստերին՝ քննարկելու կազմակերպության ընթացիկ աշխատանքները և գործունեության առաջնահերթ ոլորտները:

Գործուղվող ---------- ***Ս.Աղինյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- ***Գ.Չիլինգարյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

13.05.2025թ.

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N
1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով___

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 335-Հ, 25.04.2025թ**

3.ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի նախագահ՝ Մեսրոպ Մեսրոպյան
ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ Սերգեյ Աղինյան
ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի նախագահի խորհրդական՝ Գարիկ Չիլինգարյան

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.Մասկատ **/Օմանի Սուլթանություն /**

5. Գործուղման ժամկետները **04.05.2025-08.05.2025 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) իրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Մեսրոպ Մեսրոպյան	Սերգեյ Աղինյան	Գարիկ Չիլինգարյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար- հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս)	11,408	11,408	11,408	34.224
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	228,168	228,169	228,168	684.505
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը	4	4	4	
	Ընդամենը (դրամ) հաշիվ հյուրանոցից	152,645	155,695	152,645	460.985
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)	103	103	103	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	40,114	40,114	40,114	
	Օրերի քանակը	5	5	5	
	Ընդամենը (դրամ)	200,572	200,572	200,572	601.716
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		592,793	595,844	592,793	1,781.430

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ

12.05.2025թ.